**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2026 թվականի փետրվարի 24-ի թիվ 2 արձանագրությամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/4**

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կարիքների համար պարարտանյութերի և թունաքիմիկատների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գեներացված հրավերի տեքստով ներկայացված տեխնիկական բնութագրում 2-րդ չափաբաժնի մասով անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություն:

**Փոփոխության նկարագրություն:** 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ հետևյալ կերպ.

«Համատարած ներբույսային ազդեցության մոլախոտասպան նախատեսված ցելադաշտերում, խաղողի և պտղատու այգիներում, անտառային տնտեսություններում, արդյունաբերական օբյեկտներում և տնամերձ տարածքներում կիրառման համար: Ազդող նյութը՝ 500գր/լ գլիֆոսատ/ կալիումական աղ/: Փաթեթավորում՝ առավելագույնը՝ 1լ պոլիէթիլենային տարայով: Պատրաստուկային ձևը՝ ջրային լուծույթ: Պիտանելիության ժամկետը մատակարարման պահին՝ առնվազն 1 տարի:»

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Մելքոնյանին:

Հեռախոս՝ +37498389689 (ներքին հեռախոսահամար՝ 06)
Էլ. Փոստ՝ s.melkonyan@promotion.am
Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ